ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի 35.2 քմ (17.8 քմ և 17.4 քմ) մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2016 թվականի մայիսի 30-ը ժամկետով տրամադրել «Լրագրողի հայացք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լրագրողի հայացք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն, «Nyut.am» լրատվական կայքի գլխավոր խմբագիր, գրող Աշոտ Աղաբաբյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքից ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու խնդրանքով:

Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«Լրագրողի հայացք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը տպագրում է «Հայացք» շաբաթաթերթը: Երևան քաղաքի և հանրապետության մշակութային անցուդարձրի, մշակույթի ոլորտի գործիչների խոսքը և միտքը հասարակությանը հասցնելու համար ստեղծվել է «Nyut.am»-ի «Մշակույթ» մամուլի ակումբը, ուր հրավիրվում են մշակութային անվանի գործիչներ: Մշակութային ակումբը նպատակ ունի նաև լրատվամիջոցներին հնարավորություն տալ առավել հաճախ անդրադառնալ հասարակությանը հուզող հիմնախնդիրներին:

Ակումբը կազմակերպում է նաև գրականության ու արվեստի գործերի շնորհանդեսներ, նշում է արվեստագետների ու մշակույթի գործիչների հոբելյանները, մեծարման երեկոները:

Հաշվի առնելով ընկերության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը մեր հասարակության համար, հասարակական և քաղաքական մշակույթի, գրականության լրատվության տարածման բնագավառներում, ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի 35.2 քմ (17.8 քմ և 17.4 քմ) մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2016 թվականի մայիսի 30-ը ժամկետով «Լրագրողի հայացք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ